

09.04.2015

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ

1. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին:
/Ձեկ. Վ. Ալեքսանյան/:
2. Հումանիտար գիտությունների ֆակուլտետում ուսուցանվող հինգ մասնագիտությունների 2015-2019թթ. ուսումնական պլանների քննարկում:
/Ձեկ. Վ. Ալեքսանյան/
3. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքների քննարկում:
/Ձեկ. Վ. Ալեքսանյան/:
4. 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքների ամփոփում:
/Ձեկ. Վ. Ալեքսանյան/:

ԼՄԵՑԻՆ՝ օրակարգի առաջին կետի վերաբերյալ խոսելով՝ Վ. Ալեքսանյանը հայտնեց, որ ֆակուլտետի կանոնադրության մեջ տեղի են ունեցել փոփոխություններ: Ֆակուլտետի կառավարումը իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների գուգակցմամբ: Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը մինչ այժմ եղել է խորհուրդը: Կանոնադրության մեջ կատարված փոփոխությամբ ֆակուլտետի խորհուրդը վերակազմավորվել է գիտական խորհրդի: Ֆակուլտետի գիտական խորհուրդն իր իրավասության շրջանակներում քննարկում և լուծում է ֆակուլտետի գործունեությանն առնչվող հիմնական հարցերը: Նոր ձևավորված գիտական խորհրդում ընդգրկվել են ֆակուլտետի հինգ մասնագիտությունների հետ կապված արտահամալսարանական մասնագետներ, որոնք իրենց մասնագիտական

խորհուրդներով կնպաստեն ուսուցման արդյունավետության և կրթության որակի բարձրացմանը: Ներկայացվեց գիտական խորհրդի կազմը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- *Ընդունել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի նոր կանոնադրությունը:*
- *Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի կազմը:*

ԼՄԵՑԻՆ՝ խոսելով ուսումնական պլանների մասին՝ Վ. Ալեքսանյանը տեղեկացրեց, որ այս փուլում ֆակուլտետի ամբիոններում քննարկվել և վերանայվել են ուսուցանվող հինգ մասնագիտությունների 2015-2019թթ. ուսումնական պլանները: Պատշաճ կրթական որակի ապահովման կարևորագույն պայմանը արհեստավարժ և մասնագիտորեն հիմնավորված ուսումնական պլանի առկայությունն է: Ուսումնական պլաններում կատարվել են փոփոխություններ, որոնք հետապնդում են պատշաճ կրթություն իրականացնելու և խորը մասնագիտական գիտելիքներով զինված կադր թողարկելու նպատակ: Նա նշեց, որ այս տարի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության փոխարեն կիրականացվի բակալավրիական ընդունելություն «Հոգեբանություն» մասնագիտությամբ: Մշակվել է այդ մասնագիտության ուսումնական պլանը, որը համապատասխանում է նրա կրթական ծրագրին: Մասնակի փոփոխություններ են կատարվել «Պատմություն» մասնագիտության ուսումնական պլանի «Ընդհանուր մասնագիտական դասընթացներ» բաժնում: Մասնավորապես էականորեն նվազեցվել է «Մասնագիտության ներածություն» առարկայի ժամաքանակը, դրա փոխարեն ավելացվել է «Հայոց պատմություն-1» մոդուլի ժամաքանակը: Նվազեցվել է «Գրաբար-1» և «Գրաբար-2» մոդուլների ժամաքանակը և ավելացվել է «Հայոց պատմություն-2» և «Հայոց պատմություն-3» մոդուլների ժամաքանակը: Փոփոխություններ են կատարվել «Հայ գրականության պատմություն», «Միջին դարերի պատմություն», «Պատմության դասավանդման մեթոդիկա» առարկաների ժամաքանակներում: Հանվել է «Փիլիսոփայության պատմություն» առարկայի

դասընթացը: Մանկավարժական պրակտիկան յոթերորդից տեղափոխվել է ութերորդ կիսամյակ: Այս փոփոխությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ որպես պրակտիկանտ ուսանողների դպրոց մտնելը ավելի արդյունավետ կլինի տվյալ առարկայի դասավանդման մեթոդիկայի դասընթացը յուրացնելուց հետո:

«Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտությունների ուսումնական պլաններում ևս տեղի են ունեցել փոփոխություններ: Պետք է ձեռնարկել փոփոխություններ և ձերբազատվել քարացած և անփոփոխ պլաններ ունենալու դիրքորոշումից: Այս մասնագիտություններում ավելացվել են դասավանդվող լեզուների գործնական պարապմունքներին հատկացվող ժամաքանակները:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ուսումնական պլանում ավելացվել են գործնական պարապմունքների ժամաքանակները: Կրճատվել են «Լեզվաբանության ներածություն», «Ընդհանուր լեզվաբանություն» դասընթացների ժամաքանակները: Վերջինների փոխարեն ավելացվել են հայոց լեզվի տարբեր բաժինների և Հայ գրականության դասընթացների ժամաքանակները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Խոջայանը հայտնեց, որ Իջևանի ավագ դպրոցում այսօր դասավանդում են Հումանիտար գիտությունների ֆակուլտետի տարբեր մասնագիտությունների շրջանավարտներ, ովքեր հաջողությամբ քննություն են բռնել մանկավարժության ասպարեզում: Նա նշեց, որ այսօր դպրոցը ունի ռուսաց լեզվի բարձրորակ մասնագետ ուսուցիչների կարիք: Առաջարկեց, որ Օտար լեզուների մասնագիտություններում որպես երկրորդ մասնագիտական օտար լեզու ներդրվի ռուսաց լեզուն: Այս ճանապարհով կարելի է լուծել դասավանդող ուսուցիչների համալրման հարցը:

Պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը նշեց, որ առայժմ հնարավոր չէ ռուսաց լեզվի ուսուցման մասնագիտություն բացել: Դպրոցում ռուսաց լեզվի ժամաքանակները մեծ չեն, ուստի եթե մասնագետը տիրապետի միաժամանակ երկու օտար լեզվի, խնդիրը մասամբ կլուծվի: Պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը անդրադառնալով երկրորդ մասնագիտական օտար լեզվի հարցին, նշեց, որ այդ լեզվի ժամաքանակները ուսումնական պլաններում նախատեսված են բավականին շատ և շրջանավարտ ուսանողը հեշտությամբ դպրոցում կարող է դասավանդել թե՛ իր հիմնական, թե՛ երկրորդ օտար լեզուն: Նա մասնավորապես

վերլուծեց ռուսերենը երկրորդ մասնագիտական օտար լեզվի վերածելու խնդիրը: Մատնանշեց հարցի թեր և դեմ կողմերը: Առաջարկեց «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ, որպես երկրորդ մասնագիտական օտար լեզու, անցնել ռուսերենը: «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության երկրորդ մասնագիտական օտար լեզուն կշարունակի մնալ Ֆրանսերենը:

ՈՐՈՇԵՑԻՆՆԵՐ

- *Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետում ուսուցանվող հինգ մասնագիտությունների՝ «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», 2015-2019թթ. ուսումնական պլանները:*

ԼՄԵՑԻՆՆԵՐ՝ անդրադառնալով օրակարգի երրորդ կետին՝ զեկուցող Վ. Ալեքսանյանը հրապարակեց 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում անցկացված ուսանողական հարցումների արդյունքները: Նա շեշտեց, որ այն կարևոր գործիք է ուսումնական գործընթացում թերություններն ու սխալները բացահայտելու, դրականն ու առաջադիմականը խթանելու համար: Վ. Ալեքսանյանը ասաց, որ հարցման թերթիկներում ուսանողները անկաշկանդ գրում են դասախոսների դասավանդման որակի մասին: Հարցումներում ուսանողները սկսել են բարձրացնել ավելի կարևոր և էական հարցեր: Նա հորդորեց դասախոսներին լսարանում ավելի հետևողական լինել սեփական վարքագծին և շարունակաբար աշխատել դասավանդման որակի բարձրացման ուղղությամբ: Ուսանողության ճնշող մեծամասնությունը ապրում է այսօրվա իրականությամբ, արձագանքում աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին և տիրապետում է զգալի ինֆորմացիայի: Ժամանակակից ուսանողի մասնագիտական պահանջները բավարարելու համար դասախոսներից պահանջվում է չափազանց մեծ աշխատանք որակի շարունակական կատարելագործման ուղղությամբ: Հարցումներում արտացոլվել են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են դասախոսի անկողմնակալությունը և անաչառությունը քննությունների և ստուգումների ժամանակ: Հարցման թերթիկներում ուսանողները գոհունակություն են հայտնել մի շարք երիտասարդ դասախոսների կիրառած մեթոդներից և ընդհանուր դասավանդման որակից: Ուսանողների կողմից գնահատվել է

Ֆակուլտետի 57 դասախոս: Ներկայացվեց ամբիոնների ստացած միջին գնահատականները.

Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն – 4.46

Հայոց լեզվի և գրականության ամբիոն – 4.50

Մանկավարժության և հոգեբանության ամբիոն – 4.78

Օտար լեզուների ամբիոն – 4.60:

Ֆակուլտետի միջին գնահատականը-4,54:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը ևս կարևորեց հարցումների դերը կրթության որակի բարելավման գործում: Ընդգծեց դասախոսների մասնագիտական հմտությունների կատարելագործման և որակի շարունակական բարձրացման անհրաժեշտությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- *Համապատասխան քայլեր ձեռնարկել հարցումների թերթիկներում արտացոլված թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ:*

ԼՄԵՑԻՆ՝ Վ. Ալեքսանյանը ամփոփեց 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները: Նա նշեց, որ քննաշրջանը կազմակերպված էր պատշաճ կերպով, քննություններն ու ստուգումները իրականացվել են ժամանակացույցի համաձայն: Շեշտվեց, որ ֆակուլտետի դասախոսները նկատելիորեն կատարելագործել են թեստերը: Նրանք կազմում են բազմազան թեստային առաջադրանքներ, որոնք թույլ են տալիս առավել օբյեկտիվ ստուգել ուսանողի գիտելիքները: Ուսանողների կողմից հարցաշարերի հետ կապված խնդիրները լուծվել են ժամանակին և տարաձայնություններ չեն եղել:

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց ֆակուլտետում երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրված ակադեմիական պատկերը.

Պատմություն մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.61 և 6.77 միավոր:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.63 և 6.10 միավոր:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.85 և 6.58 միավոր:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.36 և 6.20 միավոր:

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.21 և 6.18 միավոր:

2014-2015 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետի միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.53 և 6.35 միավոր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ մասնաճյուղի տնօրեն պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը մատնանշեց այսօր ուսանողների մոտ նկատվող մի լուրջ թերություն, այն է՝ խոսքի մշակույթի բացակայությունը: Ուսանողների մի զգալի մասն այսօր գրագետ բանավոր խոսք ձևակերպելու դժվարություն ունի, շատ հաճախ անկարող է սեփական մտքերը հողաբաշխ կերպով փոխանցել խոսակցին: Այդ առումով նա կարևորեց «Հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ» առարկայի դերը: Առաջարկեց ոչ մասնագիտական բաժիններում «Հայոց լեզու և գրականություն» առարկայի փոխարեն ներդնել վերոհիշյալ դասընթացը: Այնուհետև Ս. Առաքելյանը առաջարկեց Հայոց լեզվի և գրականության ամբիոնի կառուցվածքում ստեղծել Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների սեկցիա և ղեկավար նշանակել Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Աիդա Սարհատյանին: Մասնագիտական խումբը կմշակի առարկայի ծրագիր և կառաջնորդվի այդ ծրագրով: Խոսք ասացին նաև բ.գ.թ.,դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ.,դոցենտ Ա. Սարհատյանը, կ.գ.թ. Ս. Խաչատրյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- *2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները համարել բավարար:*
- *Բ.գ.թ., դոցենտ Աիդա Սարհատյանին նշանակել Հայոց լեզվի և գրականության ամբիոնի կառուցվածքում ստեղծվելիք Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների սեկցիայի վարիչ:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վ. Ալեքսանյան

Ա. Ղևոնդյան